



Պոչկարիոյ համար

Տարեկան 12 Ձր.
Վեցամսեայ 6 »

Արտասահմանի համար
Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Անկերիկայի համար
Տարեկան 3 զր.
Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿՎԱԾՆԵՐԻ

Մասնագիտական տարբերակներ
Կրթական համար 40 սանթիմ
Կ. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ
Կ. երեքին անկերիկայի անկերիկայի համար 20 Օլո գեղջ կըլլայ :

Պոչկարիոյ համար ձեռքի
(Կ Ի Ն 15 Ս Ա Ն Թ Ի Մ)

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՔԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Նամակ եւ դրամ դրկեյ
Խմբագրութեան

W. 4
Vienna

R. P. Kalémkarian
(Autriche)

ВВСТНИКЪ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjourn»
Varna (Bulgarie)

Կրթականիս չիկ սրբութ

Արտասահմանի համար ձեռքի
(Կ Ի Ն 20 Ս Ա Ն Թ Ի Մ)

Ա Ձ Դ

Խորհուրդս նկատելով որ հարսանիքի, թաղման, մկրտութեան և այլ ազգային վերաբերեալ գործառնութեանց ապահովի գործընթացը ազգային գործոց կանոնադրելու արգելք կը լինին, որոնց յայտնեալ խորհուրդս հետ ըլլալիք ամբողջ գործառնութեան, առանց բացառութեան կանխիկ վճարմամբ լինին :

Ի դիմաց Թաղ. Խորհրդոյ
Ատենադպիր Ատենապետ
Ս. Գարիբեդեան Յ. Մ. Թովմասեան
Վառնա, 31 Յունվար

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Սօֆիայի մեր բաժանորդներէն կը խնդրենք որ հաճին իրենց թէ անցեալ և թէ այս տարուան բաժնեգրիները յանձնել մեր նոր գործակալ Պ. Հայկ Մ. Յակոբեանին :

— Ամերիկա, Կ. Ս. — Ձեր շնորհակամբ 10 տարի ժամանակին ստացած ենք :

— Ամերիկա, Տ. Պ. Մ. — Ստացանք ձեր շնորհակամբ 15 տարի :

— Ամերիկա, Տ. Մ. Գ. — Ձեր շնորհակամբ 20.50 Քր. ստացանք :

— Եաչ, Տ. Ե. Ն. — Ստացանք ձեր շնորհակամբ և 5 Քրանքը յանձնեցինք տիրոջը :

— Բնիկ Չմշկաձագցի Խարասար գիւղէն Խաչատուր Կիրակոսեան 5 տարի առաջ անյայտացած է. Պապը-Ալիի ցոյցէն երկու ամիս յետոյ նամակ առնուած է Ռուս մանիոյ Խարաչիլ քաղաքէն, 33 տարեկան երկայնահասակ, դեղին պիտերով և քիչ մը ծաղկատար. ուր կամ որտեղ, ոչ կամ մեռած ըլլալը ո՞ր գիտէ կը խնդրուի իմացունել խմբագրութեանս :

— Փիլիպոս Աղապալեան, Արարիկիցի, որ երեք տարի առաջ Վառնայ կը գտնուի եզեր, հիմա յայտնի չէ ուր գտնուիլը, կը խնդրուի ամէն անոցմէ որոնք որ գիտեն անոր ուր գտնուիլը հաճին խմբագրութեանս իմացնել :

ՅՊԱՐԿԱԾ ՍՏՐՈՒԿՆԵՐ

Իր վիճակից զոհ և վշտացած ստրուկը արգէն զլեւի է, իսկ ազգասիրական և ազատասիրական ներկով շարժված ստրուկը աւելի զլեւի և աւելի ցած է :

Գուցէ ոչ մի ժողովրդի շարժված ստրուկները այնքան ստոր չեն եղել, որչափ մերոնք են. Սրանց չէֆերը ապրում են Պոլսում, Փարիզում և Լոնդոնում, իսկ երկրորդականները Եգիպտոս, Ամերիկայ և Բուլգարիա. Անշուշտ ընթացողները կուղէին իմանալ դրանց անունները, բայց թող ներեն, գրիչս չէ համաձայնվում այդ ազատ անունները գրել . . .

Բուն հայ ժողովուրդը տեղի մաքուր է և զերծ շատ բարոյական ակտերից, քան մեր շարժված ստրուկները, որոնք արեւելքի ազատութիւններին միացրել են Ֆրանսական անմիտ պերճախօսութիւնը, երկգիծի դարձածները և մակերեսային իմաստութեան հովերը :

Կարգացէք այդ կատարելագործված, յիվիված և քաղաքակրթութեան կախով ստղծված չէֆ ստրուկների գրած քերթը, ծակ փիլիսոփայութիւնները, ազգասիրական ոգիները և ճաները, ու զուք այնտեղ կը գտնէք մտքի բացակայութիւն, ստրկական ոգի, մեղկութիւն և ամէն բան ինչ որ կարող է արագորիլ ֆրանսական ցիւրիւմի բովից անցած ազատ արեւելքը :

Առհաս սրանք, այդ շարժված ստրուկները, այսօր, ազատասիրութեան և հայրենասիրութեան քողի տակով՝ կատարեալ ստրուկութիւն են քարոզում հայ ժողովրդին. ու սրանց սիրով և միտ հաճութով ենթարկվում է հայութեան այն վատ ու թոյլ տարրը, որը ստրուկ ծնվել է և ստրուկ էլ պէտք է մեռնի, եթէ նոյնիսկ ազատ Հայաստան ունենանք :

Մենք զարմանում ենք որ հայութեան մաքուր, ստրկութիւնից ձանձրացած, զլեւած և անձնազոհ տարրը յուզվում և վրդովվում է մեր շարժված ստրուկների իրարանցումից ու քարոզներէրից : Միթէ պարզ և հասկանալի չէ, թէ հայութեան ազատամար և ազատութեան ծարաւի տարրը երբէք չի ենթարկվի ստրկութեան քարոզչներին : Ընդհակառակը, մեր համեստ կարծիքով, ստրկութեան այդ շարժված քարոզչներին երեւան գալը հայ ժողովրդի համար աւելի օգտակար է. որովհետեւ դրանք պատճառ կը լինեն անկեղծ և անյողողող ազատասէր հայ տարրի զտումին, որը՝ ազատվելով կասկածելի և անվստահելի ուժերից, աւելի հաստատուն և վճռողական քայլերով առաջ կը տանի մեր փրկութեան գործը :

Գուցէ վախ կայ թէ մեր մէջ ազատասիրական ձգտումը և ազատամարական ոգին այնքան թույլ են, որ ստրկութեան այդ նողկալի շարժված վարդապետները պէտք է կարողանան իրենց ոսկեղօծ թոյնով բոլորովին մեռցնել : Օհ, եթէ այսքան զոհերից յետոյ էլ մեր մէջ գոյութիւն չունի աննկուն ապստամբ տարր, եթէ այսպիսի վիճակում էլ հայ ժողովուրդը դեռ եւս պէտք է ենթարկվի վանաղան «պէյլառէների, էֆէնտիների» և ճոռմարան «մեծապատիւ մուրաչկան գրագէտ բանաստեղծներին» ազգեցութեանը, ուրեմն թողնենք որ հայը հանդիստմնայ ստրկական մահացնող, խեղդող միմուրտի մէջ. թողնենք որ ստրկութեան քարոզչները փաթաթվին այդ ստրկական փարախ ժողովրդի վրով, ու վերջ տան և նրա անանական գոյութեան :

Ձէ՛, մենք մի քիչ լաւատեսուհիք, մենք համոզված ենք որ թափված արիւնը զուր չէ վազել, հատում ենք որ անձնէր և վրէժխնդիր ապստամբ հայ տարրը գոյութիւն ունի. նա հայ ժողովրդի ծոցումն է, այն ժողովրդի որ ապրում է մայր երկրի մէջ, որը իր ուսերի վրայ կրում

է տաճկական լծի ամբողջ ծանրութիւնը իր բոլոր արհաւիրքներով, որը դարերով պահել է և դեռ պահում է մեր սրբազան աւանդը—Մայր Երկիրը, որը ծնում է Սերոբներ՝ սրտով, հոգով և մարմնով հայ մարդիկ, որոնց ստքերի կեղար աւելի սուղ է, քան կլէմանտների փէշերի կողքերով անցնող հազարաւոր հայ զէպէզներ իմաստակ գլուխները :

Այո՛, եթէ Հայաստանի հողը դեռ ընդունակ է ծնել Սերոբներ, Մուրաաներ, Բարկէներ և Արաաշէաներ, շարժված ստրուկների քարոզները միայն արտասահմանեան քաֆէներում թափառողներին ժամանցի նիւթ լըտան և բոլորովին կանքարոյականացնեն նրանց՝ ովքեր արգէն ի ծնէ անբարոյական էին և հայութեան համար անօգուտ, գուցէ և վնասակար :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՒԻՐԻՒՆ, 8 Փետրվ.

Ամիսէ մը աւելի է որ Յիւրիսի մէջ իր նիստերը կը շարունակէ Լեւոսանողներու ընդհանուր համաժողովը, նպատակ ունենալով Լեւոսանողութեան եւ առհասարակ լեւերիտասարդութեան ազգային գործունէութեան ուղղութիւն մը որոշել : Ռուսաստանի եւ Եւրոպայի զանազան երկիրներու բոլոր Լեւոսանողութիւններու կողմէ զրկուած են պատգամաւորներ, որոնց թիւը հարիւրէն աւելի է : Մեզի բախտակից ժողովուրդի մը զարգացած երիտասարդութեան այս ընդհանուր հաւաքումն օգտուելով Յիւրիսի փոքրաթիւ հայ ուսանողներու նորակազմ միութիւնը փութաց գերմաներէն լեզունով հետեւեալ նամակը ուղղել համաժողովին :

— Լեւական ընդհանուր ուսանողական համաժողովին ընկերական սրբատաղին ողջոյններ, Յիւրիսի հայ ուսանողներու միութեան կողմէ :
Պանդալառ կօզտուիք ասիկէն Լեւոսանողական ուսանողութեան մեր ամենաջերմ համակրութիւնը յայտնելու : Ընդհանուր հրատապ ձգտումներ եւ ընդհանուր հասարակաց առեւտրութիւնը կը միացնեն մեզ, երկու աշխարհագրականապէս իրարմէ

«Քրտախրատ եղբայրութիւնն» ալ կը յորատուի քառական գոհացուցիչ կերպով: Ներկայ վարչութիւնը զգալի փոփոխութիւններ մտցուց. ընթերցողներու սիրտն ու միտքը և գաղափարները կրթելու, զարգացնելու ընդունակ գործեր բերել տուաւ մառախաղարանին համար: Ասոնց թողուցած պակասը անշուշտ լրացրնելու պարտաւոր է յաջորդ վարչութիւնը, որքան որ ներքիւր պիտուէն: Հիմա կուան վարչութեան պաշտօնավարութեան ժամանակը լրացած է, յառաջիկայ ամսոյ մէջ նոր մը պիտի ընտրուի:

Քիչերային դասերը հոկտեմբերէն ի վեր սկսած է աւանդուիլ: Պ. Վ. Շահրիման կը դասախօսէ հայերէն և տամարակալութիւն, Պ. Կ. Պիտեան՝ Պրանսերէն և Պ. Վ. Մանուէլեան՝ թուազիտութիւն: Ասանդներու թիւը համեմատելով ուսուցիչներու զոհողութեան հետ՝ շատ ոչինչ է, հազար 10—15 կը հասնի: Թողուցնք այս ամէն ճիւղերուն ալ հաւասարակալ կարօտութիւն ունեցող պատանիները՝ որ չեն հետեւիր, նոյնիսկ գաւառացիներն ալ պէտք եղած փափաքը չեն տար օգտուելու այս եղական առիթէն իրենց մայրենի լեզուն սորվելու: Պ. Ս. Չօրեանց՝ ստանձնած է քաղաքական-տնտեսութեան դասը: շատ շահեկան ու կարեւոր

ճիւղ մը՝ որ այս արժանաւոր ուսուցիչին ձեռքին մէջ կրկնակի օգտակար կը լլայ: Առ հասարակ յարգելի դասախօսին դասերը իմ վրայ շատ լաւ ներգործած են— բացառութեան շատ յատակ ու գիւրահասկնալի եղանակ մը, կենդանի և հիթեղ փաստերու օրինակներ՝ գասը հաճելի և դիւրմբռնելի կը գարձեն: Այս դասն ալ ունի 10—15 ունկնդիրներ: Տեղն է գիտել տալու մեր երիտասարդութեան անտարբերութիւնը, զոր ունին դէպի վարգացում, մանաւանդ, երբ անոր կարօտութիւնը ունին ու ձրիապէս ալ կը արուի: Ես անանկ կը հաւատամ թէ շարթուան մէջ քանի մը իրիկուն ներկայ գտնուիլ քաղաքական-տնտեսութեան, հայերէնի, Պրանսերէնի և թուաքանութեան դասերուն շատ աւելի օգտակար է, քան թէ Գալուստին կամ Աստուրին սրճարաններուն խեղդիչ մթնոլորտին մէջ, կամ ուրիշ տեղեր, խաղամոլութեամբ կամ շաղակրասութեամբ պարսպիլ ու ծխտել իրենց թոքերը . . . :

Ամիսներ առաջ «Քնար հայկական» անունով ընկերութիւն մըն ալ ունեցանք, որուն նպատակն էր քառաձայն հայկական երգեր սորվեցնելու աշխատիլ

անդամներէն քանի մը հասնեալուն, եւրոպական ձայնագրութիւնով: Գծադարար ասուպի մը պէս՝ երեւցաւ ու անցաւ . . . չորս հինգ երգ միայն յիշատակ թողելով իր ետեւ, որոնց եղանակները թէ և Պուլկարացած, բայց առ ի չզոյէ լաւագոյններուն բաւական արործանքով կարելի էր մտիկ ընել: Այս ընկերութիւնը կազմելուն պատճառ եղան քանի մը ասք-գլուխ երիտասարդներ, սակայն անոնցմէ շատերը թողուցին նպատակին ու սկսան անձով զբաղիլ, անդամներուն որ կուտակցութեան պատկանիլը ստուգելու ելլել: Առ եկաւ հասալինիւրը այն աստիճանին որ ընկերութեան անդամներէն երկու-երեք անիրաւ անցը քանի մը փոքրոգի—թեթեւսիկներէ վերաւորութեամբ ձգեցին ելան մեկուսացան, ուրիշներ բուն անդամակցութեան ելնելով օժանդակ անդամ ըլլալ ընտրեցին, որ մըն ալ . . . ընդհանուր ժողովէ մը վերջ, լսեցինք որ կազմալուծուէր է . . . Ահա՛ շատ օգտակար ձեռնարկ մը, որ թեթեւութեան, կամ աւելի ճիշդ, ազիտութեան զոհ դարձաւ: Ես գիտեմ յուրջ անձնաւորութիւններ, որ փափաք կը յայտնեն ատանկ ընկերութեան մը վերահաստատմանը: Առ թէ անոր անդամները նախորդին պէս կուտակցական վէճերով չի չբազին, աս

ու ան չի վերաւորեն, դասատուին առջեւ իրարու դաս տալու հովեր չառնեն, փոխանակ իրենց դասով զբաղելու, անդին դասանող հայաստանցիները չի ծագուեն (․․․) և «ուղղակի» դասերը խանգարելու փոքրոգութիւնը չընեն, և է՛ն վերջը, պայմանները դիւրամատչելի ընելու աշխատին, այնպէս որ քանի մը հասնեալ անկից օգտուիլը, մեծ ընդունակութիւն պիտի գտնեն, և շատ օգտակար գործ մը ըրած պիտի ըլլան:

ԲԱՁԷ
(Մնացեալը յարորդով)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ձանազան տեղերէ մեզ կը գրեն թէ՛ ժամանակին Տիկին Բաֆֆիի Սամուէլի, Դաւիթ-Լէկի և Կայծերի հրատարակութեան համար բաժանորդ գրուած են և դրամը կանխիկ վճարած, բայց մինչեւ օրս միմիայն Սամուէլը ստացած են: Քանի մը անգամ այդ բաժանորդները միւս շտապուած գրքերուն համար նամակ գրած են տիկին Բաֆֆիի և ոչ մէկ պատասխան ստացած են: Արդեօք պատճառը ի՞նչ է: — Սուրհանդակի մէջ Մուշէն նամակ մը կայ որոյ վերջին տողերը այսպէս կը վերջանան:

Մարանի սիրէի, ինձի շատ հեշտ պիտի ըլլար աւելի քու վրայ քեռցընել այդ ամբաստանութիւնները: Արդարեւ, ինձի շատ անհասկնալի կը թուի թէ՛ ինչպէ՞ս քու թերթից Ռուսաստան կը մտնէ և մինչեւ իսկ Ռուսիոյ գանազան քաղաքներուն մէջ յայտնի գործակալներ կուենան, (․․․) երբ արտասահմանի ու եւ թերթի մտաքը արգիլուած է հոն. քութերթի մանաւանդ՝ որ կը ձգտի «Դաշնակցութեան գոյնը մերկացնել», ինչ որ շատ հաճելի չի պիտի գար ուս կտրաւարութեան, եթէ անոնք իսկապէս իր գործիքներն ըլլային: Բայց ի՞նչ պիտեամ թէ՛ թուրքի մէջ ալ աւելի ականաւոր գործակալներ չուենա . . .

Գու անարժան աշակերտ
ՇՂԷՊ
(Մնացեալը յարորդով)

(․․․) Պ. Շահապ մոռացել է այն հանգամանքը, որ ուսանող գրողները, առանց վախճալու, պարզ կերպով իրենց անունները ստորագրում են Անանիսի մէջ. այդ փաստն էլ շատ քննողիչ է Անանիսի համար: Ռուսաստան կարող է մտնել միայն այն հայ թերթը, որը կամ բոլորովին յեղափոխութեան խնդրով չէ զբաղուած եւ կամ թէ անպայման հակառակ է: Ռուսաստանը անվախ կերպով կարող է ստորագրել այն թերթի մէջ, որը յեղափոխութեան դէմ է կամ թէ ոչ յեղափոխական է:

խական բոլոր մարմիններէ ետքը գոյութիւն առած էր, ստպարէզ կեաւ անանկ չընալի մը մէջ, ուր արդէն Մարտիլիոյ ու Լոնտոնի քաղաքացիները գործունէութեան մէջ կը դրսնուէին: Սրբարեւ, այս վարիչները հայ հասարակութեան միամտութեան օգտուելով, ուսուցիչի պարբերութիւններու մէջ սկսան շատագոյն յեղափոխութիւնը և զայն ժողովրդին աչքին ներկայացուցին իբրև առասպելական ուժ մը, որ մէկէն ի մէկ պիտի գար հայերը ազատելու: «Ռուսաստանի ժողովրդին» մէկ կողմ ձգած՝ այդ «աւերիչ»ները, որոնք իրենց «յախուռն գործերով ճշմարիտ սկզբնապատճառը դարձան մեր ներկայ ազգաներուն», յուզեցին անպատրաստ ամբողջը, երբ պէտք էր «Թիկ ու անձայն ճշմարիտ անպատմութեան մը» զայն: Գու՛մ-Գարուի դէպքէն ետքը, որ ոչ նուազ «առճիկ կառավարութեան աչքը բացաւ», Սասունի կոտորածը, և Պապը-Մլիի ցոյցէն ետքը, Հայաստանի ջարդերուն անուելի շարքը այդ «վարձկան մակարոյններուն» գործունէութեան արդիւնքը եղաւ: Եւ այսօր այդ «հայրենիքի կործանիչները» կը փորձեն արդարացնել ինքզինքնին ամէն պատասխանատուութիւն ջանալով նեւսի մարմին մը վրայ, որ կեամ է ճշմարիտ յեղափոխութեան ճամբան ցուցնել ժողովրդին, այսինքն, զիննչ զայն:

(․․․) Այս չակերտներու մէջ առնուած բառերը այն սեռակ բառեր են զորս Լոնտոնցիներն ու Բարիլիցիները միշտ կը գործածեն, երբ Դաշնակցութեան վրայ յարձակիլ ուզեն:

Այս բոլորը դուն անգիտանալ կը ջանաս, Պ. Չօպանեան, և կուզես այնպէս կլիցնել թէ՛ Հայաստանի ջարդերուն միակ պատճառը «Դրօշակեան Դրութիւնը» եղած է: Այնչափ չի պիտի զգուէի այդ գրութեանէ, եթէ չի նշմարել որ «անկեղծութիւն» բառը կուզես դրամադրութեան համար: Այո՛, ամենէն աւելի նողկանք ազդողը այն կամաւոր կեղծութիւնն է, որոնք քու անհիւս վայրահալութիւններդ պաշտպանելու համար, խարդալս գրչի մը յատուկ բոլոր ցածու թիւներով, յօժարակամ յանձն կանոնս կատարելու: Գիտնալով որ Սասունի գիւնակիր խուճը թրքահայերէ կը բազանար, որոնք իրենց հայրենիքին աւերումէն ետքը, զգալով զէնքին կարեւորութիւնը ամէն զոհողութիւն յանձն առած՝ կը ջանային իրենց հայրենակիցները գիւնել, չես համարձակիր բացել ի բաց ստել եւ այդ «չէնք փոխադրողներուն» «ուսանայ» մակցիլը ալ: Բայց, որպէս զի կարողանաս ընթերցողներդ համոզել թէ՛ Դաշնակցութիւնը ուս կտրաւարութեան գործիք է. «Ռուսիայէն եկած հայեր» ստորամ բացատրութիւնը կուտաս անոր, եւ այս հանգամանքը չեւաւելու համար սող մը վարը կաւելցնես: «Իրենց քրտնայանդին հայրենակիցները պաշտպանելու» կը փութային: Դաշնակցական խմբերը առաջին անգամ չէ որ, ուսական զէնքերով ստպարէզ կուզան: Ի՞նչ զէնք կուրելի է հայթայթել այն սեռակ հայրենիքի մը համար, որուն սահմանը կը կազմէ Ռուսիոյ նման պատուութիւն մը: Սկիզբէն ի վեր, սահմա-

նազուխն անցնող զինեալ խմբերը, միասին հաշուելով մէկ քանի կտոր բրդուճ արմենականներ ու հնչակեաններ ալ, միշտ ուսական հրացանով կուտան են, և Դաշնակցութեան անուցն ու Գոլջեան ուս զէնքերով Վասպուրական մտած են: — Իսկ զայով սահմանազրկին անցնելու ինչորին, գիտցիր որ այդ խմբերը միշտ դժուարութեանց հանդէպած են: Ինչպէ՞ս պիտի բացատրես, Պ. Չօպանեան այն անվերջ հալածանքները որոնց ենթարկուած են Դաշնակցականները: Նոյնիսկ Ռուսիոյ մէջ: Շատ ու շատ հայ երիտասարդներ եւ կիներ ուս բանտերու եւ աքսորանքի կապանքներու մէջ կը հեծնեն: Բազմաթիւ Դաշնակցականներ ձերբակալուեցան իրանաստի արշաւանքին առթիւ: Ամէն տարի թիւրք կամ քիւրտ իշխաններ, որոնք ձեռք ձեռք ասպատանած են, կանցնեն Ռուսական սահմանը, ստպատակութիւններ կը ընեն ու կը գտնան, և ուս կտրաւարութիւնը չի յաջողիր գտնոնք ձեռք անցնել: Եւ եթէ այդ խմբերը որոնք սպանողաբար «ուսական գործիչներ» չեն կրնար ըլլալ, թուրքիոյ հողին վրայ կը ձերբակալուին. սպանաւոր այն է որ, թիւրք սահմանին վրայ գտնուած քիւրտ կամ թիւրք պիւղապիները իրենք կերթան կատաւարութեան զէնքը մասնելու: Եթէ այդ խմբերը միայն մէջ կը յայտնուին, իսկ միւսին մէջ ոչ, պատճառը սահմանակից բնակիչներու նկարագրի տարբերութիւնն է, և քեզի պէս սղորուկ մը միայն կրնար ու եւ է ափիզ ցփիզ, քամին մեկուսութիւններ աւալու: Իսկ եթէ ես ալ քեզի պէս տրա-

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Խարիպ աղբորանք, ձեր աղբոր ազանը ըրէք, խրատ մը տու՛մ ձեզ: Ձեր ստակներն և ոչ մէկ «աղայի» անուեով չի գրկէք. մի հաւատաք տտոնց գործակատարներուն քաղցր լեզուին, կը խաբեն զձեզ. տնաւերներ: Ձեր ստակն յանձնեցէք ձեր տեղի Առաջնորդարանին Մշոյ առաջնորդի անուան ուղղակի, և այն ժամանակ ստակ մը չի կորուսիր, և ոչ ալ փութայով եկած ձեր նամակի համար ձեր տնեցիք կը պատրաստուին 5—10 զրուշ ստակ դնել փոլիցաճիւններու սուր ճանկերու մէջ»:

— Պօլսոյ Ազգային Հիւանդանոցի հոգաբարձութիւնը ըէժիի վարչութեանէն խնդրած էր որ հիւանդանոցի մէջ սպառած երեք հազար ծրար ծխախոտը ձրիաբար տրուի: Ըէժիի վարչութիւնը յօժարած է 1500 ծրարը ձրի տալ:

— Վանայ հոգեւոր հովիւ Կեպիսկոպոս մասնաւորապէս նստախի կողմերը տիրող կարօտութիւնը տեղեկագրելով Պատրիարքարան, այդ կողմերուն համար մասնաւոր օգնութիւն խնդրած է:

— Վանէն «Սուրհանդակ»-ին կը գրեն թէ՛ ներուէս եպիսկոպոս ժողովրդեան մատաղ սերնդեան ուսման մեծապէս նախաձեռնողը է: Իր գիւղերու մէջ նորաբաց վարժարանները կը շարունակուին, (ովանք նպաստով) չի նայելով գիւղացոյց հացակարօս վրձակին:

Ինչպէս կերեւայ Վանայ նոր հովիւը կը կռուի թէ չքաւորութեան և թէ մտաւոր խաւարի դէմ:

— Պէրսեթի վանքի քարոզիչ վարդապետը իր քարոզներով կարօտելոց համար մօտ 60 ոսկի հաւաքեր է և պիտի զրկէ Պատրիարքարան:

— Ամասյո Յին, հինգ շաբթի գիշեր, «Վէսէլլօ» խումբը, Վանայի աղղային երկսեռ վարժարաններու ի նպաստ ներկայացուց Գաթերին Հովուարդ:

Գերասանները բաւական յաջող խաղացին, մանաւանդ տիկին Քնար: Խումբը բաւական ճօխ և յարմար զգեստներ ունէր:

Հանգիստականներու մէջ կային շատ օտարականներ, հայ ջոջ ազաները կը պակտէին: Թերեւս ստոմակ առած և եկած չէին: Գոնէ այդպէս ըլլար:

— Անոք մնացած անձի մը Պօլիս երթալու ծախքը հոգալու համար կիրակի օրուան եղած հանգանակութեան գումարն է 10.30 ոսկի իմ որ յանձնուած է նպատատուրեային:

ԸՆԴԱՐՁԱԿ ԵՐԳԱՐԱՆ
ՀԱՅԿԱՅԱՆ ԿԱՄ ՀԱՒԱՎԱՅՐՈՅ

Հին և նոր Ազգ. երգերու գին ՁՔլ. սոյն երգարանը կը ծախուի Վանա, Ա. Չարպանէլեանի գրատունը նաեւ կը գտնուի ամէն տեսակ գրքոցական և վիպական գրքեր. գրամի փոխարէն կընդունին նաեւ նամակագրոջմ. Գնում և վաճառում ամէն տեսակ գործածուած նամակագրոջմերու:

—)(—

Պաղատաի և իր նահանգի քանի մը քաղաքներու մէջ զօրքերը թոշակ չստանալու պատճառաւ անկարգութիւններ ըրած էին. խաղաղած են թոշակներն ստանալով:

— Պօլսոյ ֆրանսական դեսպանատան գիմնասերուն վրայ Բ. Գուռը խոստացած է պատճել այն օտարականները որոնք վերջերս խուզարկած էին ֆրանսական նաւ մը:

Գեսպանատունը հիմակ կը սպասէ որ Բ. Գուռը իր խոստումը կատարէ:

— Վերջերս կիմանանք թէ՛ Բ. Գուռը հաղորդած է ֆրանսական դեսպանատունը թէ՛ նաւը խուզարկող օտարականը արդէն պաշտօնանկ եղած է և անոր ենթադրեալ պաշտօններն ալ ուղղիչ պատմի ենթարկուած են: Այդպիսով խնդրը փակուած կը համարուի:

— «Կազէթ սը կօլօն» ֆրանսական լիբրերի ակնարկելով ֆրանսական մամուլի ճիգերը, որով կուզեն բանալ եզրկատական հարցը և զերմանացիներուն այդչալ ժման գլուխը դարձնել, կըսէ թէ ֆրանսական լրագրիւնները կը խարուին երեւակայիլով որ Գերմանիան «չականազները կրակէն» կը հանէ ֆրանսայի և Ռուսիոյ մեծ լաւութիւն մը ընելու համար:

«Այս երկու երկիրները, կը յայտարարէ «Կազէթ սը կօլօն»-ը պէտք է բաւական զօրաւոր ըլլան անձամբ զբաղուելու իրենց սեփական շահերով և այդ երկուսի համար բաւ է միայն գիտնալ թէ Գերմանիա իրենց ճամուռն մէջ տեղը չի կայներ:

— Թրանսվալի առաջնակարգ լրագրիւրը «Նիւլիոն» այժմ պատերազմական բանակին մէջ կը հրատարակուի եղեր: Գլխաւոր խմբագրիւնները, իր աշխատակիցները և տպագրողները բոլորն ալ զէնքի կոչուած են, տպարանը կառքի մը վրայ հաստատուած է և լիբրերը կանոնաւորապէս կը հրատարակուի եղեր, ինչպէս և առաջ:

— Մինչեւ հիմա Աւստրիոյ Սէլէշի, Պօհէմիա, Մօրաւիա նահանգներու քարածխային հանքերու մէջ աշխատող գործարարներէն 120,000 հոգի գործադուլ ըրած են. կը վախցուի թէ գործադուլը տարածուի ամբողջ Աւստրիոյ մէջ, Գործաւորները օրավարձի տեւացում կը պահանջեն և 8 ժամուան աշխատութիւն:

Շատ զինարաններ գոցուած են. քարածխի մեծ պէտք կայ:

— Տրէյֆուսականները որոշած են Էմիլ Զօլային, որ ճշմարտութիւնը երեւան հանելուն յանդուգն ձեռնարկողը եղաւ, շքա-

ղբամ մը մատուցանել: «Սիէկլ» լիբրերը այդ նպատակով հանդանակութիւն րացած է և արդէն 1230 հոգի ստորագրած են և վճարած 10,683 ֆրանք: Շքաղբամի մէկ կողմը Զօլայի պատկերը կայ, իսկ միւսին վրայ գրուած է անոր ըսած խօսքերը՝ «Ճշմարտութիւնը կը քալէ, և ոչինչ կրնայ անոր ընթացքը խանգարել»: Այդ շքաղբամը մինչեւ օրս եղած իր տեսակներուն մէջ՝ մեծութեամբ առաջինը է:

— Պօլսէն յունուար 30ին կը հեռագրեն թէ՛ Սուլիթանը Գօլօն և Ռօթթէլ վառօդի գործարանատէրերուն պատուիրած է 260,000 քիլօ անծուխ վառօդ, նոյնպէս Պօլսոյ վառօդի գործարանը վերակազմել:

— Յունական դեսպանատունը լուրջ գիմում ըրած է Բ. Գուռն շտապել որոշելու հիւպատոսական խնդիրներու վիճելի կէտերը:

— Ճավրիթ պէյը սպաննողը մահուան դատապարտուած է:

— Գարատաղի դեսպանը գիմնասերը ըրած է Բ. Գուռն, որ ալպանացի հրօսակախումբ մը անցած է Գարատաղի սահմանէն և գարատաղցի մը սպաննած:

— Լօնտօնի լրագրիւններուն Սերմէնիակմէն կը հաղորդեն թէ Պիլլէր դեռ ևս Թիւմէլա գետին քովէ է, միայն ժամանակով. Անգլիական զօրքերու քաջալիք միայն սաքալիքի փոփոխութեան համար է, և տեղի ունեցած է այն պատճառով միայն որ իմացած են թէ Պօէրները պիտի յարձակում գործեն: Անգլիացիք նորէն յարձակողական գիրք պիտի բռնեն:

— Կըսուի թէ Պօէր մէնէրալ Ժուպէր 6000 հոգիով ճամբայ ելած է յարձակում ընել մէնէրալ Պիլլէրին զօրաբանակին մէկ լիբրեր վրայ:

— Անգլիական պատերազմական նախարար Լատտօտուն յայտարարած է որ մտադրութիւն ունի կազմակերպել 12 նոր վաշտ զօրք և դաշտային ռմբաձիգներու 43 բաժին:

— Անցեալ անգամ մենք հաղորդեցինք Լալթօֆի մահը: Յունուարի 31ին Փարիզի մէջ տեղի ունեցեր է այդ հոշակուոր ռուս յեղափոխականին լծադուր, որու միջոցին ընկերվարականները անհաղին ցոյց մը ըրեր են:

Կէս օրէն սկսեալ բաղմաթիւ ֆրանսացի և օտար յեղափոխականներ հաւաքուեր են հանգուցեալի բնակարանին քով. ամէն խումբ կրելով իր նշանը, Բաղմաթիւ պատկեր կան եղեր. մեծ մասը անթառամ կարմիր և դեղին ծաղիկներէ, որոնք զըրկուած են բոլոր երկիրներու ընկերվարականներէն, յայտուէններու վրայ ֆրանսերէն և օտար լեզուներով գրուած:

Ամենէն աւելի աչքի զարնողը

փշեայ պոսակ մըն էր կարմիր ծաղիկներով, որուն սեւ ժապուէնի վրայ գրուած են հետեւեալ խօսքերը:

«Սիւպերիոյ՝ արտոբաւնեբէն և տաժանակիր աշխատութեան պատապարտուածներէն իրենց մեծ ուսուցիչ Պետար Լալթօֆին»:

Թաղումը կատարուած է առանց կրօնական ծեսի: Ֆրանսացի նախարար ընկերվարականներ ճառեր արտասանած են, որոնք կընդհատուէին «կեցցէ ընկերվարութիւնը, կեցցէ Գօմիւնան, կեցցէ հասարակապետութիւնը»:

ԹԻՒՏՐՈՆ «ՍԱՆԹՐԱԼ»

«Վէսէլլօ» հայ թատերական խումբը, այս գիշեր, Փետրվար 5, առաջին անգամ ըլլալով պիտի ներկայացնէ՝ «Գոյ Սիմօն» սրամ գօմէտի 4 արար:

Խիստ ծիծաղաշարժ զաւելտ մը:

Վաղը կիրակի գիշեր, Փետր. 6, առաջին անգամ ըլլալով պիտի ներկայացնէ՝ «Հօր մը անէժքը» սրամ գօմէտի 4 արար:

Խիստ ծիծաղաշարժ զաւելտ մը:

ԳՅԻՆԶՐԱՏՈՒՆ, ՍԱՆԹՐԱԼ

S. ԹԻՒՏԵՆԿՅԱՆԻ

Մուսայրաի Թաղապետական պարտիզին յիւնաց, Ասիկի Անկի, Սլաւօֆը

Պատիւ ունիմ ծանուցանելու Արդոյ հասարակութեան թէ՛ այս անգամ մեծաւ պատրաստութեամբ բացած եմ սոյն գարեջրատունը, յուսով եմ թէ չը պիտի զլանայ պատուարժան հասարակութիւնը զիս քաջալերել:

Թ. ՃԱՆԿԻԻԼԵԱՆ

ՆՈՐ ԲԱՆՈՒՄԻՅ ԵՒԱՎԱՃԱՌԱՆՈՅ

Թիւ 389 Իսկիդ-պաշի

Կը վաճառուի ծրախոտ, բոթայի և աղբուսագրի ամէն տեսակ բույր նաեւ զանազան տեսակ սիկարներ: Գէ Թուականին հրապարակ ելած Պուլիտրոյ զահաժառանգ Պօրիսի պատկերազարդ քառթ-փութալներ, որ այժմ չեն գործածուիր: Նոյնպէս և կը վաճառուի «Շարժում»:

Շարժումը կը ծախուի նաեւ նամակատան գիմնաց նոր բացուած փոքրիկ գրատունը:

Նաեւ Շարժումը կը ծախուի Ա. Չարպանէլեանի գրատունը և իրմբարգրութեանս մէջ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐՇՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեւորման, հասցէտման, նամակաղլուի, հարսանեկան հրաւիրագիր, մահազդ, ինչպէս նաեւ պրօշիւռներ:

Գիտերը յոյժ գիւրամատչելի Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին:

ԹԱՆՁՆԱՐԱՌՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻԿ

Учателѣта, Взаимность, Варна